

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սեյրան Գրիգորյան, Վահագն Դավթյանի պոեմները, Եր.,
«Արմավ» հրատ., 2021, 458 էջ*

Բանալի բառեր – պոեմ, ասք-պոեմ, ժանր, կառուցվածք, նմանակում, ոճավորում, բանահյուսություն, պատմություն, դրամա, արդիականություն:

Գրականությունը ստեղծվում է որոշակի ժամանակում ու որոշակի միջավայրում՝ փորձելով ուղղակիորեն կամ անուղղակիորեն արձագանքել տվյալ ժամանակին հուզող հարցերին: Բայց լավագույն գրողները փորձում են դուրս գալ ժամանակի ու միջավայրի անձուկ շրջանակից, մշակութային կամուրջ ստեղծել անցյալ ու գալիք սերունդների միջև և ըստ այդմ երկարացնել իրենց հետմահու կյանքը: Այդ գրողների թվին է պատկանում բանաստեղծ Վահագն Դավթյանը, որի պոեմներից շատերը կատարում են հիշյալ կամուրջի դերը: Եվ ոչ միայն:

Ըստ այդմ օրինաչափ է, որ այսօր հրապարակի վրա է գրականագետ Սեյրան Գրիգորյանի «**Վահագն Դավթյանի պոեմները**»¹ մեծածավալ մենագրությունը՝ այդ պոեմները նորովի և նոր լույսի տակ քննելու առաքելությամբ: Ս. Գրիգորյանի աշխատությունը երևան է հանում մի քանի ուսանելի օրինաչափություններ: **Առաջինը** թերևս այն է, որ գրականագիտական աշխատանքը պետք է հենվի փաստական հարուստ նյութի և դրա վերլուծության վրա՝ բացառելու համար սուբյեկտիվությունը, եզրակացությունների անկիարժեքությունը և այլն: Այս առումով Ս. Գրիգորյանը լիովին բավարարում է նշված պահանջը, որովհետև նա տիրապետում է փաստական ահռելի նյութի, որը վերաբերում է Վ. Դավթյանի կյանքի բազմաթիվ դրվագներին, հուշագրությանը, հոդվածներին, հարցազրույցներին, արձակին, այս կամ այն առիթով արտահայտած տեսակետներին, թարգմանություններին, ինչպես նաև ժամանակի քննադատական արձագանքներին, որոնք բազմաթիվ են: Դավթյանը ուշադրության պակաս չի զգացել. նրա յուրաքանչյուր ժողովածու, անգամ առանձին բանաստեղծություն, արժանացել է իր ժամանակի քննադատների լայն արձագանքին: Մակայն այսքանը ևս բավարար չէր լինի լավ գիրք գրելու համար, եթե Գրիգորյանը հայ հին, միջնադարյան և նոր ու նորագույն գրականության հրաշալի իմացություն չունենար: Այս վերջին հանգամանքը թույլ է տալիս նրան զուգահեռներ անցկացնել ու համեմատություններ կատարել ժամանակակիցների

* Ընդունվել է տպագրության 19.10.2021:

1 Տե՛ս **Գրիգորյան Ս.**, Վահագն Դավթյանի պոեմները, Եր., «Արմավ» հրատ., 2021, 458 էջ:

ու նախորդների ստեղծագործությունների հետ, Դավթյանի պոեմները դիտարկել ստեղծման ու վերամշակման ընթացքի մեջ, հայտնաբերել բանաստեղծի փոխառությունները, ընդօրինակումները, ոճավորումները և, որ շատ ավելի կարևոր է, նորամուծությունները, մեկնաբանությունները, գաղափարաբանությունն ու շեշտադրումները և, ըստ էության, տարբերությունները մյուսներից: Սա Ս. Գրիգորյանի գրքի արժանիքներից մեկն է:

Հաջորդ հայտնությունը, եթե կարելի է ասել, Վ. Դավթյանի ինացության անպարագիծ շրջանակն է, որի մեջ ի հայտ են գալիս բանաստեղծի միջնադարագիտությունը, բանահյուսական և պատմագիտական գիտելիքները, հայ և համաշխարհային պոեզիայի լավատեղյակությունը, հատկանիշներ, որոնք տեսանելի են դառնում Գրիգորյանի կատարած տեքստաբանական, կառուցվածքային, ժանրային և լրացուցիչ այլ վերլուծությունների շնորհիվ: Գրիգորյանը շերտ առ շերտ բացում է Դավթյանի ստեղծագործական լաբորատորիան, անդրադառնում այս կամ այն պոեմի տարբերակներին, նրա այս կամ այն բառի՝ այլոց կողմից օգտագործված լինելու հանգամանքին, փոխառության իրավունքին ու արդարացիությանը:

Դավթյանի պոեմների կառուցվածքային վերլուծությունները հաճախ ի հայտ են բերում փոխառություններ ու ընդօրինակումներ նախորդ ստեղծագործողներից, ինչը եթե մի կողմից կարող է որոշ չափով ստվեր գցել նոր բանաստեղծի գործերի վրա, մյուս կողմից ցույց է տալիս, որ Դավթյանը ամբողջովին կլանել է իրենից առաջ եղած բանաստեղծական մշակույթը: Կա նաև հարցի երրորդ կողմը: Այսօր պոստմոդեռնիզմի տեսաբանները հայտարարում են, որ յուրաքանչյուր նոր գիրք ստեղծվում է նախորդ գրքերից: Գուցե եթե այսօր Գրիգորյանի ջանասիրությամբ ուսումնասիրենք այլոց ստեղծագործությունները (ի դեպ, Գրիգորյանն այդպես վարվել է նաև Պարույր Սևակի ստեղծագործության հետ), շատ շատերի ստեղծագործություններում կարող ենք հայտնաբերել ընդօրինակումներ ու ոճավորումներ, այլ կերպ ասած՝ նախորդ գրքերից ստացված նոր գրքեր: «Վահագն Դավթյանի պոեմները» աշխատության մեջ Գրիգորյանը ցուցաբերում է կոմպլեքս մոտեցում՝ կիրառելով բանասիրական գիտության բոլոր ձյուղերի՝ գրականագիտության, տեքստաբանության, տեսության, պատմության և այլ ոլորտների հնարավորությունները: Այսուհանդերձ, առաջնային տեղում պոետիկայի հարցերն են՝ ժանր, ավանդույթ, ոճավորում և այլն: Բուն սկզբունքը ժանրաբաժանումն է՝ պոեմ, ասք-պոեմ, փոքրիկ պոեմներ: Սրան ավելանում է պոեմների սեռային տարբերակումը՝ էպիկական, քնարաէպիկական ու քնարական: Հաճախ գրականագետը ժանրի դասական ձևի և Դավթյանի անվանումների նույնությունն չի տեսնում, ինչպես ասքերի դեպքում, ինչը բացատրում է բանաստեղծի գաղափարական դիրքորոշմամբ, պատմական փաստի նկատմամբ հեղինակի

գեղագիտական իդեալի առաջնայնությամբ: Օրինակ՝ «Ծուխ ծխանի» ասք-պոեմում Դավթյանին հետաքրքրում էր ոչ այնքան Արտավազդ թագավորը, որքան Արտավազդ մարդը: Ըստ Ս. Գրիգորյանի՝ այս ելակետով էլ Դավթյանը պատմական որոշակի հիմքի վրա «հանրահայտ սյուժեները ենթարկում է փիլիսոփայական մշակման և ստեղծում բարոյագիտական համապատասխան կոնցեպցիա»²: Ըստ այս դիտարկման և ընդհանրապես, Գրիգորյանը Դավթյանի ինչպես ասքերի, այնպես էլ պոեմների բովանդակային հիմքը համարում է ավելի բանահյուսական, քան պատմագիտական, ինչի հետևանքով էլ «...հերոսները դիտվում են առավելապես իրենց բնավորություններով, աշխարհայացքի ու բարոյաբանության դրսևորումներով և ոչ թե քաղաքական, ռազմական կամ արվեստագիտական գործունեության փաստերով»³:

Դավթյանի նախասիրությունը ժողովրդական աշխարհայեցողությունն է, ընդ որում, այդ երևույթը նկատվում է ոչ միայն ասքերում, այլև պոեմներում, ներառյալ նաև «Թոնդրակեցիներ» պատմական պոեմը: Այդ բարոյաբանությունն է ընդգծվում նաև «Ճերմակ ձիավորը» ասքում, երբ Մուշեղ սպարապետը, ուղղակիորեն չպատասխանելով Փառանձեմ թագուհուն հասցված անարգանքին, ազատ է արձակում Շապուհի կանանոցը: Այս հարցում Գրիգորյանը հետևում է մեր պատմության և գրականության մեջ ստեղծված ավանդույթին, ըստ որի՝ գովերգվում են Մուշեղի բարությունը, ռազմի մարդու վեհանձնությունը, հայ ժողովրդի բարոյական վեհությունը: Բայց այստեղ լուրջ հարց է ծագում՝ ժամանակակից բարդ աշխարհում, քաղաքականության ու դիվանագիտության ասպարեզում բարին ու վեհությունը որևէ դեր խաղո՞ւմ են, և արդյոք դա չի՞ դառնում թուլության արտահայտություն: Իհարկե, բարությունը բարձր ու մարդասիրական արժեք է և հատկապես գրականության մեջ ունի դաստիարակչական նշանակություն, որտեղ այն դիտվում է իբրև ուժեղ մարդու կամքի դրսևորում, բայց այլ է իրավիճակը իրական կյանքում: Որքան մեզ հայտնի է, Նաիրի Զարյանն է դեմ գնացել այս ավանդույթին իր «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգության մեջ: Երբ աղեղը լարած Արան փորձում էր սպանել իրեն նվաճելու եկած Շամիրամին և հանկարծ վեհանձնաբար հրաժարվում է այդ մտքից՝ պատճառաբանելով, որ դիմացը գեղեցիկ կին է կանգնած, Վաշտակը նրան զգուշացնում է.

**Արբա՛, ես ծեր մի զորավար, ապա գուշակ եմ հին,
Չբսպանելով նետիդ առաջ կանգնած քո ոտխին,**

² Նույն տեղում, էջ 48:

³ Նույն տեղում:

**Դու սահմանում ես մեր ոգին և ապագան,
Այսինքն՝ թուլությունը Հայկազյան ցեղի⁴:**

Չարի վերաբերյալ այլ դիրքորոշում ունի Դավթյանը, որի կարծիքով՝ բարությունն անգամ չարին դարձնում է բարի.

**Եվ խոսք են խոսում, թե ետ այնօրիկ,
Մեղմացավ բարքը գագան Շապուհի,
Ու մի սակավիկ
Շատացավ բարին աշխարհի վրա⁵:**

Նույն փիլիսոփայությանը հանդիպում ենք նաև «Ծուխ ծխանի» պոեմում, երբ Արտավազդ արքան հանուն «գլուխ չթեքելու» բարոյական սկզբունքի գլխատվում է: Ս. Գրիգորյանը այս փիլիսոփայությանը մի գիծ է ավելացնում. «Արտավազդի բարոյական սխրանքի արժեքը ավելի է մեծանում, երբ Դավթյանը արժանապատիվ արքայի և մարդու ընտրությունը բախում է այրամարդու բնական կրքի հետ: ...Դա չափազանց դժվար է, որովհետև հայոց արքան ճգնակյաց մեկը չէ, այլ հեթանոսական առողջ վայելքներին քաջածանոթ տղամարդ: Չնոռանանք նաև, որ նրա առջև մատչելիորեն կանգնած էր համաշխարհային գեղեցկուհին»⁶: Սակայն Գրիգորյանի հետագա խոսքից հասկացվում է, որ Արտավազդի պահվածքը խանդավառությամբ չի ընդունվել: Նա նկատում է. «Հանուն ճշմարտության ասենք, որ ընդհանուր առմամբ ինքը՝ Վահագն Դավթյանը ևս հեռակա վեճ ու անհամաձայնություն ունի Արտավազդի հետ: Այսուհանդերձ, բանաստեղծը միանգամայն համոզված է, որ իր տված գեղարվեստական լուծումը համոզիչ է»⁷: Մեր կարծիքով՝ բարոյաբանական թե փիլիսոփայական այս հարցի լուծումը չի կարող լինել անվերապահ ու միանշանակ⁸:

Ս. Գրիգորյանի աշխատության տիրապետող որակը ընդհանուր առմամբ տեսական, պոետիկական դիտարկումներն են, ժանրային փոխակերպումները, հարստացումը, բանաստեղծի հեղինակային նորամուծությունների, ժանրային սինթեզների հայտնաբերումը: Եթե խոսքը մասնավորեցնենք «Ծուխ ծխանի» պոեմի առումով, ապա կարող ենք ասել, որ, գրականագետի կարծիքով, «ծուխ ծխանի» արտահայտությունը բանաստեղծի համար ոչ միայն հայրենաբաղձության խորհրդանիշ է, այլև «ապրելու

4 Նաիրի Ջարյան, Միհատոյակ, Եր., 1959, էջ 668:

5 Գրիգորյան Ս., Վահագն Դավթյանի պոեմները, էջ 92:

6 Նույն տեղում, էջ 112:

7 Նույն տեղում, էջ 114:

8 Ի դեպ, քրիստոնեական թե բարոյաբանական այս թշնամու նկատմամբ վեհանձնություն դրսևորելու երևույթները երևան եկան նաև արցախյան վերջին պատերազմում: Տես Հ. Վարդումյանի «Բաջին», Հովի. Երանյանի «Մորս մահվան օրը» պատմվածքները և այլ հեղինակների գործեր:

սկզբունք է, բարոյական կերտվածքի մարմնավորում, հայկական կերպի խորհրդանիշ»։ «Այն Դավթյանի պոեզիայի գեղագիտական հիմնակետերից մեկն է և իզուր չէ, որ տեղ է գտել նաև «Ասք սիրո և սրի», «Զվարթնոց» պոեմներում, դարձել պատմական պոեմների վերնագիր, տարիներ շարունակ հոլովվել նրա քնարական բանաստեղծություններում...»⁹։

Ընդհանրապես պոեմների վերլուծությունը գրականագետը կատարում է կայուն սկզբունքներով, այն է՝ բացահայտել պատմական կամ բանահյուսական հիմքը, էպիկական և քնարական սկիզբների հարաբերությունը, հեղինակային մեկնաբանությունը, փոփոխություններն ու երբեմն նաև առաջադրանքները, առնչություններն այլ մշակումների հետ, ոճավորումները, կրկնություններն ու երբեմն ընդօրինակումները, ազդեցություններն ու հաճախ փիլիսոփայական ու բարոյաբանական ենթատեքստի կամ եզրակացության տարբերություններն ու ինքնատիպ ձևակերպումները։ Այս ամենին Գրիգորյանը, ըստ անհրաժեշտության և պոեմի տված հնարավորության, հավելում է դրամատիզմի, երաժշտականության, գունային կոլորիտի, բնապատկերի և այլ հատկանիշների վերլուծություններ, որոնք յուրաքանչյուր պոեմի բնութագիրը դարձնում են ավարտուն, և ըստ այդմ՝ գրքի տվյալ հատվածը կարող է հավակնել առանձին գոյության։

Ինչպես և պետք էր ենթադրել, մենագրության մեջ էական տեղ է զբաղեցնում «Թոնդրակեցիներ» պոեմի վերլուծությունը։ Ս. Գրիգորյանը մանրամասնորեն քննում է պոեմի տարբերակների առանձնահատկությունները և այն դրական աշխատանքը, որ Դավթյանը կատարել է պոեմը մշակելու, այուժետային ծանրաբեռնվածությունը թուլացնելու, սոցիոլոգիզմը մեղմացնելու, անէական կերպարներից հրաժարվելու ուղղությամբ։ Տարբերությունների ընդգծումն ինքնին արդեն ցույց է տալիս առաջին տարբերակի թույլ և թերի կողմերը, որոնք գրականագետը նշում է առանց ավելորդ ներողամտության։ Նրա կարծիքով՝ փաստերի անհարկի ուռձացումը, էպիկականության նկարագրական բնույթը, դրամատիկական ձևը և այլ թերի կողմեր խանգարում էին բանաստեղծական ընդհանրացմանը։ Ի դեպ, Գրիգորյանը շատ հաճախ հիշյալ պոեմը քննում է Պ. Սևակի «Անլուելի զանգակատան» գուգահեռում՝ իհարկե կիզակետում ունենալով «Թոնդրակեցիները», հիմք ունենալով 1950-ականների վերջի և 1960-ական թվականների գրականության մեջ և պոեմի բնագավառում այս երկուսի առաջատար դերը։ Միևնույն ժամանակ այս պոեմներում նա տեսնում է 1940-1950-ական թվականների «էպիկական պոեմի որոշ իներցիան»¹⁰, ինչը Սևակը հաղթահարեց մեկ, իսկ Դավթյանը՝ երկու քայլով (նկատի ունի «Թոնդրակեցիներին» արմատական վերամշակումը)։ Երկրորդ տարբերա-

9 Նույն տեղում, էջ 123:

10 Նույն տեղում, էջ 170:

կում Դավթյանը վերանայում է «Էպիկական սյուժեի թե՛ խնդրառությունը, թե՛ կոմպոզիցիոն իրացումը» և «ստեղծում է արդեն խոռվության ոչ թե փաստագրական մանրամասները, այլ խորհրդանշական բարձրակետերը»¹¹: Տարբերությունների կոմպոզիցիոն և գաղափարական համեմատության միջոցով գրականագետը գալիս է այն համոզման, որ ծավալուն նկարագրությունների փոխարինումը խորհրդանիշներով ավելի հազեցած է դարձնում հեղինակային խոսքը և ավելի իմաստակիր: Տեքստային համեմատական նմանատիպ քննությունը, որը, ի դեպ, Գրիգորյանը կատարում է նաև մյուս պոեմների վերլուծության ժամանակ, նրա խոսքը դարձնում է հավաստի, եզրակացությունների համար ստեղծում է ապացուցողական բազա: Այդ բազայի վրա է գրականագետը կատարում իր ամփոփումը. «Հրաժարվելով նկարագրական մանրամասներից, դիպաշարային անընդհատությունից՝ Դավթյանը պոեմը դարձնում է անհամեմատ ավելի դինամիկ: Կորցնելով արտաքին առարկայական էպիկականությունը՝ նա նվաճում է ավելի խոր էպիզոդ, որը համարժեք է մոնումենտալությանը և ոչ թե սյուժետայնությանը»¹²:

Պոեմի երկրորդ տարբերակի առավելությունների նշումը կրկին հաստատում է առաջինի արդեն նկատված թերությունները: Ընդհանուր առմամբ, բոլոր պարագաներում, գրականագետը ձգտել է լինել օբյեկտիվ: Գնահատելով հանդերձ Դավթյանի ստեղծագործական վաստակը՝ Գրիգորյանը չի անտեսում բանաստեղծի վաղ շրջանի պոեմների թերությունները, որոնք մեծ մասամբ պայմանավորված էին «անկոնֆլիկտայնության» շրջանի գրական արատավոր քաղաքականությամբ («Տուրուխանյան երկրում», «Պտուտակներ» և այլն), և արդեն անվանի գրողի որոշ վրիպումներով: Բնական է, որ Դավթյանի պոեմների շարքում «Թոնդրակեցիների» զբաղեցրած տեղին ու արժեքին (ծավալային, գաղափարական, սյուժետային առումներով, պատմական հիմքով և այլն) համապատասխան՝ Գրիգորյանի մենագրության մեջ ևս այն պետք է նշանակալից տեղ գրավեր կերպարների վերլուծության, ժանրային համակարգի բնութագրման, բանահյուսական որոշ ժանրերի ներառման, դրամատիզմի, ոճավորման և այլ առումներով:

Սմբատ Զարեհավանցու կերպարի հանգամանալից քննության ժամանակ Գրիգորյանը անդրադառնում է նրա մղած պայքարի անձնական, հոգեբանական, սիրային, սոցիալական և այլ շերտերին, փնտրում է այդ պայքարի դրդապատճառները և, հիմնականում **ըստ բանահյուսական աղբյուրների**, նրան մի կողմից ներկայացնում իբրև ժողովրդի ընտրյալ, փրկիչ, ինչը նրան դեպի դիցաբանություն է տանում, մյուս կողմից՝ իբրև

11 Նույն տեղում, էջ 171:

12 Նույն տեղում, էջ 173:

Մասնա շառավիղ, Մանասարի գերված զավակ, երրորդ կողմից՝ հասարակ գյուղացի՝ «սոցիալական շարժման առաջնորդ», «ձշմարտաորոնող ու մտածող հերոս»¹³: Զարեհավանցու և վանահոր բանավեճի առիթով թվում է, թե Գրիգորյանը չեզոք հեռավորություն է պահում թոնդրակյան շարժման և եկեղեցու դիրքորոշումներից՝ իր համակրանքը չմասնավորեցնելով կողմերից մեկի նկատմամբ: Մինևույն ժամանակ նա հանգամանորեն կանգ է առնում Սմբատ Զարեհավանցու կերպարի վրա՝ թեկուզ միայն նրան հատկացրած ծավալի միջոցով արտահայտելով իր վերաբերմունքը: Մեջբերելով Սմբատի և վանահոր վեճից մի հատված, որտեղ Սմբատը վանահոր՝ հեզության գաղափարին պատասխանում է շառաչող կայծակի հիշատակությամբ՝ պատճառաբանելով, որ թեև կայծակը մի վայրկյան է տևում, բայց նրա «Հզոր բռնկումից երևում է ձամփան», Գրիգորյանը եզրակացնում է. «Հեզությանը հակադրվող խոյանքի այս պաշտպանությամբ պոեմը հաղթահարում է պատմական ժամանակի ներփակ շրջանակները և դուրս գալիս արդիականություն»¹⁴:

Անդրադառնալով պոեմի 9-րդ գլխին, որն ամբողջովին կազմված է Զարեհավանցու աղոթքից, Գրիգորյանը բացահայտում է կերպարի երազանքն ու նպատակը, աղոթք, որի «բովանդակությունը մարդկային երջանկության երազանքն է: Աստծուն մոտեցած, նրան գրեթե հավասարված հզոր անհատը դատում է Բարձրյալի արարչությունը և սոցիալական ու հոգեբանական հիմնավորում տալիս իր նոր, մարդկային արարչականին»¹⁵: Սա Սմբատի, վերջին հաշվով՝ թոնդրակեցիների պայքարի արդարացիության հիմնավորումն է: Ըստ էության, հակառակորդ կողմը ևս, ի դեմս վանահոր, արդարացի է թոնդրակյան շարժումը մերժելու առումով. «Վանահոր միտքն ու խոսքը հայ ժողովրդի պատմության ու քրիստոնեական հավատի մասին խորը փիլիսոփայություն է՝ հակադրված թոնդրակյաններին»¹⁶: Կերպարի հիմքում գրականագետը տեսնում է Գր. Մագիստրոսի և հակառակորդ այլ մատենագիրների տեսակետների արձագանքը: Ստացվում է, որ երկուսն էլ՝ թե՛ Սմբատ Զարեհավանցին, թե՛ վանահայրը, յուրովի ճիշտ են:

Հենվելով միջնադարյան բանահյուսական տվյալների և Ասատուր Մնացականյանի ուսումնասիրությունների վրա՝ Գրիգորյանը հաստատագրում է միջնադարյան դիալոգային երկերի գոյությունը և դրանց օրինակով «Թոնդրակեցիներ» պոեմի վիճաբանական բնույթը. «Ուղղակի կամ միջնորդավորված ձևով ելնելով այդ գրականությունից՝ Վահագն Դավթյանը «Թոնդրակեցիների» բազմաթիվ դրամատիկական հատվածներ կա-

13 Նույն տեղում, էջ 179:
14 Նույն տեղում, էջ 181:
15 Նույն տեղում:
16 Նույն տեղում, էջ 187:

ռուցել է վիճաբանական սկզբունքի վրա: Այդ առումով պոեմի դրամատիզմը խիստ բովանդակալից է և արտահայտում է թոնդրակյան դարաշրջանի իմաստասիրական և բարոյագիտական գաղափարների պայքարը»¹⁷: Այս պարագայում արդեն ո՛չ պոեմի հեղինակի, ո՛չ էլ դրա մեկնաբանի խնդիրը դատավորի կեցվածք ընդունելը չէ, այլ նկարագրվող ժամանակի հակադիր գաղափարների գոյության և դրանց բախման բովանդակության ներկայացումը: Պոեմի բովանդակային մեկ այլ կողմ, կարելի է ասել, Գրիգորյանին արդարացիորեն ավելի է հետաքրքրում, երբ նա փորձում է գտնել նկարագրվող դեպքերի ու իրավիճակների կապը արդիականության հետ: Սմբատի պայքարի էությունը գրականագետը համարում է անհատի ազատության հիմնախնդիրը, որն ունի արդիական հնչեղություն: Դա նկատելի է ոչ միայն Սմբատի վարքագծում, այլև Սիմավոնի տարեգրության մեջ, որի որոշ հատվածներում գրականագետը աղերսներ է տեսնում նորդարյա օրերի հետ: Օրինակ՝ հիշատակելով Սիմավոնի հետևյալ գրառումը՝ «Ժամանակներ դժնի, // Արդ սուտ մատյաններ են վանքերի մեջ գրվում, // կաղապարով ձուլվում փծուն ու սին տաղեր», նկատում է. «Սրանք էլ, հարկավ, կեղծ, անկոնֆլիկտային գրականության, սխեմատիզմի ու ճառագրության պատմական զուգահեռներ են»¹⁸: Թերևս մնացած բոլոր դիտարկումներից այս առնչությունների հայտնաբերումը կամ ընդգծումը շատ ավելի դժվար նկատվող, բայց ավելի կարևոր է, որովհետև պոեմներում հենց այս կարգի մտքերն են կամուրջ ստեղծում անցյալի ու ներկայի միջև: Պոեմի տարբեր՝ բանահյուսական և պատմական հիմքերի, ազդեցությունների, դրամատիզմի, էպիզմի ու քնարերգության հարաբերության, ոճավորման և բազում այլ առանձնահատկությունների բացահայտումն ու բացատրությունը՝ ժամանակի քննադատության արձագանքների ներառմամբ, ընդլայնում են «Թոնդրակեցիների» բովանդակային և բանարվեստի հարստության շրջանակները և ընդգծում այն առանձնահատուկ տեղը, որ ունի այս պոեմը Վ. Դավթյանի ստեղծագործության մեջ:

Մենագրության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում նաև Վ. Դավթյանի փոքրիկ պոեմներն ու պոեմ-շարքերը, որոնք քննվում են պատմական, բանահյուսական ու արդեն նաև գրական հիմքերի բացահայտմամբ: Որպես օրինակ կարելի է հիշատակել «Գինու երգը» պոեմ-շարքը, որն ընկալվում է իբրև Դ. Վարուժանի մտադրության իրականացում ու նաև վերջինիս «Հացին երգը» ժողովածուի ոճավորում: Օրինակներով բացահայտելով քննադատության կողմից արդեն իսկ հիշատակված այս հիմքերը՝ Ս. Գրիգորյանն առաջ է գնում նոր առնչություններ հայտնաբերելու ուղիով: Օգտվե-

17 Նույն տեղում, էջ 197:

18 Նույն տեղում, էջ 186:

լով Հակոբ Սիրունու այն վկայությունից, որում նա գրում է, թե ինչ մտադրություններ ուներ Վարուժանը «Գինու երգը» ծրագրելիս, Գրիգորյանը մեկ առ մեկ ցույց է տալիս, թե ինչպես է Դավթյանը համապատասխան ձևով իրականացրել Վարուժանի ծրագիրը: Նաև անդրադառնում է ժողովածուի ժանրային նկարագրին՝ այն անվանելով պոեմ-շարք, որը գոյություն ուներ դեռևս դարասկզբին, ինչպես ժամանակին նկատել է Էդ. Ջրբաշյանը:

Գրիգորյանը կատարում է հաջորդ քայլը՝ աղերսներ փնտրելով ոչ միայն «Հացին երգի»՝ արդեն նախորդների կողմից նշված ժողովածուի, այլև «Հեթանոս երգերի» հետ: Այդ հետքերը նա փնտրում է Դավթյանի ուրիշ գործերում ևս («Մանդու»): Հենվելով «Գինու երգը» պոեմ-շարքի առաջին գրախոսներ Ս. Աղաբաբյանի և Գ. Մահարու տեսակետների, ինչպես նաև նմանությունների հայտնաբերման առումով սեփական հայտնագործումների վրա՝ գրականագետը եզրակացնում է, որ «Գինու երգը» արևելահայ ու արևմտահայ պոեզիայի խաչաձևումն է նաև պատկերային ու լեզվառձական առումներով: Ինչպես ժամանակի քննադատների, այնպես էլ Գրիգորյանի հավաստմամբ՝ դա ոչ թե Վարուժանի պոետիկայի կրկնությունն է, այլ նրա ավանդների շարունակությունը, թեև դժվար է այդ նուրբ սահմանը գտնելը:

Նույն մեթոդով ու գրեթե նույն չափանիշներով քննվող (եթե պոեմները լրացուցիչ հարցեր չեն առաջացնում և կամ էլ հիմք չեն տալիս բոլոր չափանիշները կիրառելու) բոլոր պոեմներին անդրադառնալը կրկնություն կարող է առաջացնել մեր խոսքում, ուստի փորձենք կանգ առնել մեկ-երկու տարբերակիչ առանձնահատկությունների վրա: Բացի քննվող պոեմներից, որոնց հիմքը պատմական կամ բանահյուսական է, Դավթյանն ստեղծել է նաև ինքնակենսագրական հիմք ունեցող պոեմներ, փոքրիկ պոեմներ կամ պոեմ-շարքեր: Սակայն այդ ստեղծագործությունները, որքան էլ անձնական, անհատական ապրումների ձևով են ներկայացված, իբրև քնարական ստեղծագործություններ, այնուամենայնիվ, արտացոլում են պատմությունը («Բայց ծնվեցի», «Ռեքվիեմ», «Անկեզ սորենի» և այլն)՝ բեկված անհատական ճակատագրում, ավելի հուզական ու ավելի ապրված: Այս առումով թերևս կարելի է առանձնացնել «Ծննդավայր» շարքը կամ շարք-պոեմը, ինչպես բնորոշում է գրականագետը, որն աչքի է ընկնում վարակիչ հուզականությամբ, կորցրածի ցավով ու թախիծով:

Ընդհանրապես պոեմների դասակարգումները մենագրության մեջ կատարվում են ժանրատեսակների հիմունքներով, երբեմն էլ՝ էպիկականի կամ քնարականի գերակշռության սկզբունքով, առանձին դեպքերում՝ թեմատիկ-բովանդակային բնույթով: Օրինակ՝ «Արարչություն» փոքրիկ պոեմը Գրիգորյանը դասում է, այսպես կոչված, ծննդաբանական կամ բիրլիական պոեմների շարքին: Ի դեպ, այս պոեմի վերլուծությունը շատ հաջող-

ված է այն իմաստով, որ այստեղ միանգամայն ակնառու է դառնում Դավթյանի ինքնություն, բանավիճային մեկնաբանությունը, որը հակադրվում է արարչագործության դոգմատիկ ըմբռնմանը: «Դավթյանի պոեմում արարիչն ու արարվողը փոխել են տեղերը: Տեսնելով, որ աշխարհը շատ է անաստված՝ վեցերորդ օրը մարդն է իր պատկերի նմանությամբ ստեղծում **Աստծուն**: Աշխարհի ծննդաբանության մարդկային այս կոնցեպցիայում Աստված դիտվում է որպես մարդու կենսագործունեության մի անհրաժեշտ հանգրվան միայն, նրա ստեղծած բոլոր արժեքների միագումար...»¹⁹, - գրում է գրականագետը: Նա ուշադրություն է հրավիրում նաև մի ուրիշ շատ կարևոր խնդրի վրա. աշխարհաստեղծումը չի ավարտվում վեց օրում, Աստծո ստեղծած նյութական աշխարհին Դավթյանը հակադրում է հոգևոր արժեքներ (երազ, սեր, գինի, կրակ...), որոնք ընկած են մարդու գոյության հիմքում և շարունակական են, ինչը Դավթյանը ձևակերպում է իբրև «հոգնած հավիտենություն»:

Անհրաժեշտ ենք համարում հիշեցնել գրականագետի չկաղապարված մտածելակերպի մասին: Որոշ բանաստեղծությունների նա տալիս է պոեմի արժեք, անվանում բանաստեղծություն-պոեմ: Այս առումով մենք լիովին համամիտ ենք «Երբ վերջին անգամ աչքերս փակվեն այս աշխարհի դեմ» տողով սկսվող բանաստեղծության արժեքավորմանը: Այս բանաստեղծությունը գրվել է բանաստեղծի ստեղծագործական կյանքի միջօրեին (լույս է տեսել 1970 թ. «Անկեզ մորենի» ժողովածուում): Եթե ավելի շուտ գրված լիներ, հնարավոր էր դիտարկել իբրև ծրագիր՝ **սեր, տուն, երգ** խորհրդանիշների հետագա ծավալման հեռանկարով: Բայց Դավթյանն արդեն անցել էր իր ստեղծագործական ճանապարհի կեսից ավելին: Մեր կարծիքով՝ դա բանաստեղծի անցած ճանապարհի ու դավանած արժեքների ընդհանրացումն է, որը լույս է ճառագում նաև գալիքի վրա: Գրիգորյանն իր նախընտրած սկզբունքով բացահայտում է բանաստեղծության մոտ և հեռավոր առնչությունները ինչպես այլոց ստեղծագործությունների, այնպես էլ Դավթյանի նախընթաց բանաստեղծություններում հաճախ հիշատակվող իդեալ-պատկերների ու խորհրդանիշների հետ: Այս առումով տվյալ բանաստեղծությունը, անկախ այս կամ այն գրողի հետ ունեցած որևէ հեռավոր կապից, լիովին դավթյանական է: Իբրև նշված պոեմ-բանաստեղծության վերլուծության եզրափակիչ ակորդ՝ Գրիգորյանը գրում է. «Այս իմաստով բանաստեղծությունը, աղջիկ-տուն-երգ եռամիասնությունից բացի, ամփոփում է նաև մահվան խորհրդանիշը: Ընդ որում, ինչպես լինում է աշխարհի լավագույն պոեմներում, կարևորագույն իմաստ պարունակող «մահ» բառը բացակայում է թե՛ կրկնվող տողերում, թե՛ ամբողջ

19 Նույն տեղում, էջ 322:

ստեղծագործության մեջ»²⁰: Կարևոր է նկատել, որ մենագրությունն ունի նաև տեսական որոշակի արժեք, որովհետև հեղինակը, ըստ անհրաժեշտության, անդրադառնում է պոեմների ժանրային նկարագրին՝ երբեմն չբավարարվելով ժանրերի ստանդարտ չափանիշներով, նկատում է ժանրային տարբեր հատկանիշների համակցում, բանահյուսական ժանրերի միաձուլում գրական ժանրերին, այս կամ այն պոեմում դրամայի և երաժշտության հատկանիշների օգտագործում և այլն: Բացի ժանրային նմանությունների ու տարբերությունների, պոեմների կառուցման հեղինակային նախասիրությունների և սեփական ոճի նկատմամբ հավատարմության բացահայտումից՝ Գրիգորյանը գործ է ունեցել թեմաների և բովանդակային նյութի բազմազանության հետ, բայց այդ ամենին անդրադարձն այստեղ կհանգեցնեք գրքի բովանդակության վերապատմմանը:

Ս. Գրիգորյանի «Վահագն Դավթյանի պոեմները» աշխատությունն ի մի է բերում թեմայի վերաբերյալ նախորդների դիտարկումները, բայց միևնույն ժամանակ մեծ չափով ընդլայնում է պոեմների բովանդակության ու պոետիկայի վերաբերյալ գոյություն ունեցող ուսումնասիրությունների շրջանակը, հարստացնում է բազմաթիվ նոր շերտերի ու առնչությունների բացահայտմամբ, նուրբ և յուրօրինակ ընկալումներով, ստեղծագործությունների ստեղծման պատմությամբ, դրանց արդիականության շեշտադրմամբ: Կարևոր է նաև ընդգծել հավասարակշռված շարադրանքը, նախորդ ուսումնասիրողների նկատմամբ գնահատող վերաբերմունքը, հստակ լեզուն՝ առանց խրթնաբանությունների ու անհարկի պարօսի:

Ս. Գրիգորյանի «Վահագն Դավթյանի պոեմները» աշխատության մեջ կարելի է գտնել նաև որոշ վիճելի մտքեր, անհամաձայնություններ, որոնցից մեկը կուզենայինք նշել: Անշուշտ, շատ գնահատելի են Դավթյանի ստեղծագործությունների հիմքերի բացահայտման հեղինակի ջանքերը, կատարված բանասիրական ու տեքստաբանական աշխատանքը, բայց երբեմն այն տպավորությունն է ստեղծվում, որ դրանք կարծես կասկածի տակ են դնում բանաստեղծի **ինքնուրույնությունը**: Կարծում ենք, որ այդ անհրաժեշտ բացահայտումների հետ պետք էր ավելի հանգամանորեն կանգ առնել Դավթյանի **անհատականության** ընդգծված կողմերի և մեկնաբանական այն նոր որակի վրա, որով նա տարբերվում է նախորդներից և ժամանակակիցներից: Դրանք, անշուշտ, կան մենագրության մեջ, բայց այլոց հետ նմանությունների տպավորությունը գերակշիռ է:

Կարծում ենք, սակայն, հետաքրքիր է այն գիրքը, որը մտածելու, ինչու ոչ, նաև վիճելու տեղիք է տալիս, այսինքն՝ միտք է շարժում: Վերն ասվածից դժվար չէ եզրակացնել, որ Սեյրան Գրիգորյանի «Վահագն Դավթյանի

20 Նույն տեղում, էջ 343:

պոեմները» աշխատությունն ընդլայնում է ընթերցողի իմացության շրջանակները, այն իսկապես նոր որակի գիրք է, որն անպայման հարստացնում է ժամանակակից հայ գրականագիտությունը:

Ժենյա Ա. Քալանթարյան
Բանասիր. գիրք. դոկտոր

Ժենյա Ա. Քալանթարյան – հեղինակ է 100-ից ավելի հոդվածների, մենագրությունների («Հայ գրականագիտության պատմություն», «Եղիշե Չարենց», «Վահագն Դավթյան»), ուսումնասիրությունների ժողովածուների («Անդրադարձներ», «Գրական հորիզոններ», «Դիտանկյուն», «Ժամանակների միջով, ժամանակների հետ»), դպրոցական դասագրքերի, բուհական ձեռնարկների («Հայ գրական քննադատության քրեստոմատիա» երկու հատորով, «Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն») և այլն: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է գրական քննադատության պատմությունն ու տեսությունը, հայ նորագույն և ժամանակակից գրականությունը:

Էլ. հասցե՝ j.kalantaryan@ysu.am

Summary

A VALUABLE MONOGRAPH

Seyran Grigoryan, Vahagn Davtyan's Poems, Yerevan, Armav
Publishing House, 2021, 458 pages

Zhenya A. Kalantaryan

Key words – poem, epic poem, genre, structure, imitation, stylization, folklore, history, drama, modernity.

The review analyzes and evaluates the peculiarities, principles and criteria of the method used by S. Grigoryan--the author of the mentioned book. It is observed that Grigoryan necessarily takes into account both the time of writing the poem and the time the poem covers, trying to uncover the linkage between the past and the present. One of the important merits of the monograph is the search for the bases of the structural and lexical layers of the poems in historical and folklore sources. According to the literary critic, Davtyan builds his poems mostly on a folklore basis, as a result of which poems reflect the folk worldview.

The article comments on the comparisons made by the author of the book with the historical and folklore sources of the poems, as well as similar works by previous poets. It is noticed that some cases of stylization, imitation, repetition revealed by the literary critic, according to his own observation, Davtyan used for his own interpretation of the material, thus bringing his personality onto the material.

The critique assesses S. Grigoryan's comprehensive approach in revealing both inter- and intra-genre features of the poems. The author of the monograph examines the poems and comes to convincing conclusion comprehensively drawing from all the branches of philology, including the history of literary history, literary theory, literary criticism, textualism, etc. The monograph is deemed to be a noticeable contribution to modern Armenian literature.

ЦЕННАЯ МОНОГРАФИЯ

Сейран Григорян, «Поэмы Ваагна Давтяна»,
Ереван, издательство «Армав», 2021 г. , 458 с

Женя А. Калантарян

Ключевые слова - поэмы, эпическая поэма, жанр, структура, имитация, стилизация, фольклор, история, драма, современность.

В данной статье анализируются и оцениваются особенности, принципы и критерии метода, использованного автором книги «Поэмы Ваагна Давтяна» С. Григоряном. Отмечается, что, как правило, С. Григорян учитывает, как время написания обсуждаемой поэмы, так и отраженное в ней время, пытаясь обнаружить связь между настоящим и прошлым. Одним из важных достоинств изучаемой монографии является поиск основ структурно-лексических пластов поэм В. Давтяна в исторических и фольклорных источниках. По мнению литературоведа С. Григоряна, Давтян строит свои стихи в основном на фольклорной основе, выражая, тем самым, народное мировоззрение.

В статье проводится анализ исторических и фольклорных основ поэм В. Давтяна, а также их сравнение с аналогичными произведениями более ранних поэтов. Отмечено, что отдельные случаи стилизации, имитации, повторения, выявленные литературным критиком, по наблюдениям С. Григоряна, Давтян использовал для собственной интерпретации материала, оставив тем самым печать своей личности в своих произведениях.

В статье дается оценка комплексного подхода С. Григоряна к выявлению родо-жанровых и внутрижанровых особенностей поэм В. Давтяна. Используя знания по филологии, по истории литературы (теорию, критику, текстуализм и др.), автор монографии приходит к убедительным выводам. Своей монографией С. Григорян внес заметный вклад в современное армянское литературоведение.

REFERENCES

1. **Grigoryan S.**, Vahagn Davt'yani poemnerĕ, Yer., "Arnav" hrat., 2021 (**In Armenian**).
2. **Nairi Zaryan**, Mihatoryak, Yer., 1959 (**In Armenian**).